

Լրագրողների աշխատանքը ապօրինաբար խոչընդոտվել է դատարանում

July 31, 2017

Լրագրողների աշխատանքը ապօրինաբար խոչընդոտվել է դատարանում



Լուսանկարը՝ Կենտրոն ՉԸ-ն

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Վահագն Մելիքյան նախագահությամբ ընթացող Դավիթ Դումիկյանի սպանության գործով ս.թ. հուլիսի 11-ին նշանակված հերթական դատական նիստի ժամանակ խոչընդոտվել է «Կենտրոն» հեռուստաընկերության լրագրողների՝ դոնբաց դատական նիստին ներկա գտնվելու և այն լուսաբանելու իրավունքը: Նկարահանող խմբին մինչ դատական նիստի մեկնարկը դահլիճից դուրս են հրավիրել դատական նիստի կարգադրիչները: Սա բացառիկ դեպք է, երբ դոնբաց դատական նիստի դահլիճից լրագրողները հեռացվում են՝ առանց դատարանի համապատասխան որոշման:

Դոնբաց դատական նիստին լրագրողների մասնակցությունը երաշխավորված է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային օրենսդրությամբ: Քրեական դատավարության լուսաբանման խնդրին անդրադարձել է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների Կոմիտեն իր R (2003) 13 հանձնարարականով, որը սահմանում է, որ հասարակությունը պետք է կարողանա ստանալ տեղեկություններ դատական իշխանության գործունեության վերաբերյալ, ուստի լրագրողները պետք է կարողանանան ազատորեն լուսաբանել քրեական արդարադատության համակարգի գործունեությունը:

Արձանագրում ենք, որ տեղի է ունեցել խոսքի ազատության և լրագրողների մասնագիտական գործունեության խոչընդոտում, ինչպես նաև խախտվել է դոնբաց դատական նիստի հրապարակայնության սկզբունքը:

Հաշվի առնելով, որ լրագրողների՝ դոնբաց դատական նիստեր լուսաբանելու իրավունքը հաճախակի խոչընդոտվում կամ սահմանափակվում է, կոչ ենք անում

դատական կարգադրիչներին՝ հարգել լրագրողների օրինական մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունքը և զերծ մնալ ինքնագործունեությունից,

բոլոր դատավորներին՝ ապահովել լրագրողների՝ դոնբաց դատական նիստը լիարժեքորեն լուսաբանելու իրավունքը,

ՀՀ Արդարադատության նախարարությանը՝ նախաձեռնել բարեփոխումներ Քրեական, Քաղաքացիական և Վարչական դատավարության օրենսգրքերում՝ հստակեցնելով դոնբաց դատական նիստերի լուսանկարահանման և տեսանկարահանման իրավունքը, դրա արգելման հիմքերն ու ընթացակարգերը

Լրատվամիջոցների ղեկավարներին՝ դրսևորել համերաշխություն, բարձրաձայնել այս խնդիրը իրենց թողարկումներում/հրապարակումներում և սատարել խնդրի օրենսդրական կարգավորմանը հասնելու գործին

ՀՀ դատական դեպարտամենտին՝ նախաձեռնել քայլեր լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունը ապօրինաբար խոչընդոտած կարգադրիչներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

«Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպություն

Դեպքի մանրամասներին կարող եք ծանոթանալ

«Կենտրոն» հեռուստաընկերության պատրաստած [տեսանյութում](#) [2]

Թեմատիկ նյութեր

[Amnesty International. Նայաստանի իշխանությունները պետք է հետաքննեն մարդու իրավունքների խախտման դեպքերը](#) [3]

[«Ինտերնետի հայկական տիրույթում բովանդակության գարգացման մասին» ուսումնասիրություն](#) [4]

[Ինչպես լուսաբանել ընտրական և հետընտրական գործընթացները](#) [5]

[«Նա/Նե»-ի հանրային թղթակցի առաջին տեղի մրցանակը տրվեց ԼՀԱ-ի թղթակցին](#) [6]

[Obama World Blog. Վեց խորհուրդ հաջողված բլոգ ունենալու համար](#) [7]

Source URL: <http://www.jnews.am/journalists-job-illegally-hindered-in-the-court>

Links:

[1] <http://www.jnews.am/files/%20%D5%80%D4%B8.jpg>

[2] https://www.facebook.com/pg/hrparmenia/videos/?ref=page_internal%D5%BE

[3] <http://www.jnews.am/amnesty-international-statement-elections-2013>

[4] <http://www.jnews.am/report-on-content-of-armenian-internet-segment>

[5] <http://www.jnews.am/covering-elections>

[6] <http://www.jnews.am/anushik-avetyan-got-nane-media-award>

[7] <http://www.jnews.am/successful-blogger>